Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 190 - Ա
որոշման

«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Էներգախնայողությունն ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի «Արամայիս Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տանիքին արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	3,900,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի «Արամայիս Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն Հայաստան, Սյունիք, Տեղ, Ս. Բարխուդարյան փողոց, շենք 7, 3219, ՀՎՀՀ՝ 09205469
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 7-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 28-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի «Արամայիս Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տանիքին նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում: Կատարվելու են կայանների ոտնակների և կայանների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխները կայաններին միացման աշխատանքներ: Իրականացվելու է 2025 թվականի ապրիլի 7-ից մինչև 2025 նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,900,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի «Արամայիս Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տանիքին 20 Կվտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,900,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ